'ի Կոստանդինուպոլիս · յայնժամ տնօրինեսցի որ ինչ հարկն է, և չէ ինչ վնասակար եթէ գրեսցի վասն այսր հրովարտակ, ըստ որոշման ատենին գրեցաւ հրովարտակ, և 'ի հասանելն յԵրուսաղէմ՝ ընթերցաւ 'ի Դատարանի։

Յայնժամ Կուսակալն Ալի Փաշա, Ոստիկան Նէպլի Էֆէնտի՝ Դատաւորն և մեծամեծք այլազգեաց, Հայք և Յոյնք ժողովեցան 'ի Ս · Յարութիւն, վերստին քննեցին ըստ հրամայելոյ հրովարտակին, եւ ստուգեալ հաստատեցաւ թէ՝ սենեակքն այնքիկ էին նախ քան զհրդեհն, և թէ յետոյ ոչ շինեցան, և 'ի քննութեան ոչ մուծան յարձանագիր, և վասն այսր Դատաւորն Համուլլահ տուեալ էր գիր Հայոց, մատուցին և զայն։ Դատաւորն զանց արար զնովաւ և առեալ զմեծամեծս այլազգեաց մեկնեցաւ անտի, և առանց վախճան տալոյ գործոյն, եւ Յունաց Իլամ և Հէօճմէթ · իսկ Պատրիարքն Հայոց վերստին գրեաց 'ի Կոստանդինուպոլիս՝ առաքելով զգիր նախկին Դատաւորին և գյատակագիծ տեղւոյն, և մատուցաւ 'ի Դուռն, և դարձեալ խնդրեցին հրման վասն շինութեան սենեկաց։ Եպարքոսն հրամայեաց ակնարկել յարձանագրութիւնս Դիւանին եւ գտին՝ զոր ինչ գրեալ էին յայնժամ յԵրուսաղէմ, թէ ըստ հրովարտակին եղեւ քննութիւն վասն սենեկացն Հայոց · այժմ նոքա չերեւին 'ի միջի, զի այրեցան 'ի հրդեհին, և յետոյ Յոյնք ոչ շինեցին · Յոյնք յայտնապէս ուրացան, և 'ի ձեռս երկաքանչիւր ազգաց են թղթեանք հակառակ միմեանց, ուստի հարկ եղեւ անտես առնել, եւ 'ի գիրս նախկին Բդեշխին ոչ նշմարին, որ տուեալ է Յունաց յետ աւարման շինութեան · նոյնպէս և 'ի գիրս Դատաւորին, և 'ի տեղեկագիրս Նէպլի Էֆէնտեայ, գործն համեմատ Կայսերական հրամանին աւարտեցաւ ասէ, իսկ գրեանք նախկին Բդեշխին, Դատաւորին և Վերատեսչին միմեանց հակառակ են, նաեւ Կայսերական հրովարտակին, և այս եւս յայտնի տեսանի՝ զի գոյութիւնք սենեկաց նախ քան զհրդեհն էին, և զկնի այնր ո՞վ արդեօք խնդրեաց հրման շինութեան, եւ ո՞ր ազգ տիրեաց · 'ի նմանէս և 'ի ծանուցագիրս չնշմարի կէտ ինչ, ուստի խնդիրն վերստին հարցման և քննութեան պէտս ունի · այս է արտադրութիւն արձանագրութեան կայ-